01 ապրիլի 2019 թ.
ժամը 12:50 թիվ՝ 4

<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի

**Արձանագրություն**

*<<ՋԿ-ԳՀԱՊՁԲ-19/6> ծածկագրով գնման ընթացակարգի*

*գնահատող հանձնաժողովի նիստի*

*Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝*

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/վարչատնտ. բաժնի պետ/ Աշոտ Հյուսիսյան
**հանձնաժողովի անդամներ -**
/հաշվապահ/ Արմեն Օթարյան
/գույքի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ/ Միքայելյան Միքայելյան
/գույքի կառավարման բաժնի մասնագետ/ Նվարդ Վարդանյան
/պարտքերի վերլուծությունների, մոնիթորինգի և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/ Հայրապետ Բարսեղյան
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

***Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին***

---

*Հանձնաժողովի նախագահ Աշոտ Հյուսիսյան*

**1. Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը Կարգի 43-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1–ին մասի 7.13-րդ կետի պահանջներին համապատասխան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/ կատարել է հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Կոմիտեն կատարված հարցման վերաբերյալ տրամադրել է եզրակացություն:

**2. Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցների որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին**

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 59-րդ կետերի դրույթները և հրավերով սահմանված որակավորման պահանջների առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

- Աննա Ղազարյան Աշոտի ԱՁ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,
- Աննա Սահակյան ԱՁ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,
- Էվրի Դեյ ՓԲԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,
- ԷՔՍՏՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,
- Պետրոսյան Հոլդինգ ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,
- Սմարթլայն ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար,
- Քլին Ֆոամ ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

**3 Մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագրերում տեղ գտած անհամապատասխանության մասին**

3.1 Սմարթլայն ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրում կան անհամապատասխանու-թյուններ

հրավերի 1-ին մասի 4.3 կետի 5-րդ ենթակետի և 2-րդ մասի 3.1-րդ կետի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ Սմարթլայն ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութգրում 24-րդ չափաբաժնի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունը հանձնաժողովը որոշեց՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և հանձնարարել հանձնաժողվի քարտուղարին ծանուցել Սմարթլայն ՍՊԸ-ին առաջարկելով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և էլեկտրոնային փոստի հասցեին՝ ohanyan-harutyun@mail.ru, ուղարկելու միջոցով Հայջրմուղկոյուղի ՓԲԸ ներկայացնել թվային ստորագրված, պատշաճ լրացված՝ 24-րդ չափաբանի լրացումով, հրավերի պահանջներին բավարարող տեխնիկական բնութագիր: Տեխնիկական բնութագիրը չներկայացնելու կամ հրավերի պահանջներին անհամապատասխան տեխնիկական բնութագիր ներկայացնելու դեպքում Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համաձայն Սմարթլայն ՍՊԸ-ի 24-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտը ենթակա է մերժման:

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

**4 Ընտրված Մասնակից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին**

4.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը և Մասնակցի որակավորման չափանիշներին հրավերի պահանջներին, գնահատման թերթիկներով տրված գնահատականները, Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով .

**Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել**

Աննա Ղազարյան Աշոտի ԱՁ-ին 6-9-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ չափաբաժինների մասով
Աննա Սահակյան ԱՁ-ին 4-րդ, 5-րդ և 10-րդ չափաբաժինների մասով
Էվրի Դեյ ՓԲԸ-ին 50-րդ չափաբաժնի մասով
ԷՔՍՏՐԱ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ին 41-րդ չափաբաժնի մասով
Պետրոսյան Հոլդինգ ՍՊԸ-ին 27-րդ, 28-րդ, 32-րդ, 33-րդ, 39-րդ և 44-րդ չափաբաժինների մասով
Սմարթլայն ՍՊԸ-ին 2-րդ, 11-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ և 25-րդ չափաբաժինների մասով
Քլին Ֆոամ ՍՊԸ-ին 40-րդ, 43-րդ, 45-րդ և 46-րդ չափաբաժինների մասով

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 5 /հինգ/ օրացուցային օրը:

24-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովը որոշում կկայացնի սույն արձանագրության 3.1 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/վարչատնտ. բաժնի պետ/ Աշոտ Հյուսիսյան

**հանձնաժողովի անդամներ** -
/հաշվապահ/ Արմեն Օթարյան

/գույքի կառավարման բաժնի
առաջատար մասնագետ/ Միքայելյան Միքայելյան

/գույքի կառավարման բաժնի մասնագետ/ Նվարդ Վարդանյան

/պարտքերի վերլուծությունների, մոնիթորինգի և
հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/ Հայրապետ Բարսեղյան
***Հանձնաժողովի քարտուղար՝***
Հարություն Օհանյան